

# ՀԱՎԵԼՎԱԾ

Ավագ Ա. Հարությունյան

Պատմ. գիյ. թեկնածու

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 1920–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հետահայաց քննություն մեկ դարի հեռավորությունից \*

**Բանալի բառեր** – խորհրդային իշխանություն, ՀՅ Դաշնակցություն, կոմունիստական կուսակցություն, Ռիզայի բանակցություններ, Դրո, լիկվիդացիա, Չեկա:

### Մուտք

ՀՅ Դաշնակցության և Հայաստանի կոմունիստական կուսակցության միջև գաղափարաքաղաքական տարաձայնություններ կային դեռևս մինչև Հայաստանի խորհրդայնացումը, բայց 1920 թ. դեկտեմբերի 2-ին խորհրդային կարգերի հաստատումից հետո դրանք վերածվեցին համընդհանուր (տոտալ) հակամարտության ու պայքարի: Այս անգամ ակտիվ ու նախահարձակ կողմը Հայաստանի բոլշևիկյան իշխանություններն էին, որոնք իրենց առջև նպատակ էին դրել հնարավոր և անհնարին բոլոր միջոցներով «արմատախիլ անելու» այն ամենը, ինչ կապված էր ՀՅԴ անվան հետ: Այս երևույթը զուտ տեղային բնույթ չէր կրում. բուն Ռուսաստանում գրեթե վճռվել էր ոչ կոմունիստական կուսակցությունների ճակատագիրը, և հասկանալիորեն կոմկուսի հաստատած մենատիրության մեխանիզմն ինքնին պետք է կիրառվեր նաև Հայաստանում: Եվ այդ աշխատանքում ՀԿԿ-ին ամեն ինչում աջակցում էին ՌԿ(բ)Կ ԿԿ-ն և նրա Կովկասյան բյուրոն, որին հետո փոխարինեց Անդրկովկասի երկրամասային կոմիտեն:

Հայաստանի խորհրդայնացման հենց սկզբից ՀԿԿ-ն որդեգրեց ՀՅԴ «լիկվիդացման» քաղաքական ուղեգիծը, որի հաջողությունը կախված էր իշխանության ամրապնդումից, քանզի նոր կարգերի համար խոչընդոտ էր Նժդեհի գլխավորած զանգեզուրյան հերոսամարտը, ինչը նշանակում էր Խորհրդային Հայաստանի տարածքում դաշնակցական զինուժի ներկայութ-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.02.2022:

յուն: Այդ պատճառով նոր իշխանությունների առաջնահերթ նպատակն էր խորհրդայնացնել Զանգեզուրը, որովհետև 1921 թ. Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո խորհրդային իշխանությունը, փաստորեն, միայն Սյունիքում չէր հաստատվել:

## 1. Բոլշևիկ-դաշնակցական «ներդաշնական» Ռիգայի անհաջող փորձը

Զանգեզուրի հայության պայքարի հետ սերտորեն կապված էր 1921 թ. Ռիգայում սկսված բանակցային գործընթացը ՌԿ(Բ)Կ ԿԿ և ՀՅԴ պատվիրակությունների միջև<sup>1</sup>: Դեռևս 1921 թ. հունիսի 6-ին ՀՅԴ Արտասահմանի պատասխանատու մարմինը որոշեց բանակցությունների առաջարկություններ կայացնել ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին: Վերջինիս Քաղբյուրոն 1921 թ. հունիսի 8-ի նիստում համաձայնեց ու որպես պատվիրակ նշանակեց Ս. Տեր-Գաբրիելյանին, որը, բանակցություններին կողմ լինելով հանդերձ, դեմ էր ՀՅԴ-ի հետ կոալիցիոն կառավարություն կազմելուն<sup>2</sup>: Ս. Տեր-Գաբրիելյանին ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի առջև պաշտպանեց Գ. Չիչերինը, որի կարծիքով՝ բանակցություններ պետք է վարեին հայ կոմունիստները, քանզի կոալիցիայի և այլ հարցեր վերաբերում էին ուղղակիորեն Խորհրդային Հայաստանին<sup>3</sup>: Հիշենք Ս. Տեր-Գաբրիելյանի՝ 1921 թ. հունիսի 15-ի արտագործող կոմ Ա. Մռավյանին գրած նամակը, որում նա ընդհանուր գծերով ներկայացնում էր հարցի պատմությունը: Դրանում նշվում էր մի ուշագրավ հանգամանքի մասին: Հայտնելով, որ Անտանտը պլանավորել է Թուրքիայի տարածքում ստեղծել հայկական, քրդական և լազական պետություններ, ու նշելով այդ առթիվ Մուստաֆա Քեմալի և դաշնակիցների միջև հարաբերությունների մասին՝ Ս. Տեր-Գաբրիելյանը շեշտում էր, որ բանակցություններում իրենց գլխավոր նպատակն է կանխել կանխել, կանխել լուծարել այդ պլանները և, եթե հնարավոր է, ինչ-որ բան անել թուրքերից որոշ տարածքներ ստանալու համար: Ս. Տեր-Գաբրիելյանը միայն այդ դեպքում էր կոալիցիայի հնարավորությունն ընդունում<sup>4</sup>: Բանակցությունների հիմքում դրվեց ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին ուղղված Վահան Փափազյանի 1921 թ. մայիսի 26-ի նամակը, որով առաջարկվում էր բանակցել «հարաբերությունների կարգավորման և համատեղ գործողությունների համակարգման համար»<sup>5</sup>:

1 Մանրամասն տես Փափազյան Վ., Իմ յուշերը, հատ. 3, Գահիրե, 1957, էջ 206-233, Հարությունյան Ա. Ա., Ռիգայի 1921 թ. ՀՅԴ-ՌԿ(Բ)Կ բանակցությունները խորհրդային գաղտնի փաստաթղթերում, «Վեն», Եր., 2012, N 1, էջ 205-240:

2 Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ ՀԱԱ), ֆ. 1457, ց. 1, գ. 191, թթ. 1-3:

3 Տես նույն տեղում, թթ. 9-10:

4 Տես նույն տեղում, ֆ. 1440, ց. 1, գ. 30, թ. 1:

5 Նույն տեղում, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թթ. 5-8:

Ռիգայում 1921 թ. հուլիսի 8-14-ի բանակցություններին մասնակցում էին ՀՅԴ-ի կողմից Վ. Փափագյանը, Վ. Նավասարդյանը, Ա. Զամայանը և ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի կողմից Ա. Իոֆֆեն, Ս. Տեր-Գաբրիելյանը, Վ. Տեր-Վահանյանը<sup>6</sup>: Հուլիսի 14-ին Փափագյանը ներկայացրեց առաջարկները. «1. Անկախ և ինքնուրույն Հայաստանի գոյություն, որը բոլորի՝ այդ թվում և Ռուսաստանի հետ պետք է պահպանի լրիվ գերիշխանություն, 2. Ռուսահայաստանին միացվում են տնտեսական և քաղաքական գոյության համար բավարար տարածքներ Թուրքահայաստանից, ընդ որում Ռուսաստանի աջակցությամբ: Հ.Յ.Դ. պատրաստակամություն հայտնեց աջակցել Հայաստանի կառավարությանը՝ աշխարհի հայերի շրջանում նրա օգտին ագիտացիա կատարելով և հողային հարցում ապահովել Եվրոպայի աջակցությունը ու ազդել Թուրքիայի վրա: Ընդհանուր առմամբ համաձայնվելով առաջարկներին՝ Իոֆֆեն պարտավորվեց առաջարկել ու միջնորդել ՀԿԿ ԿԿ-ին՝ ՀՅԴ գործունեությունը լեգալացնելու և համատեղ աշխատանքի խնդրով»<sup>7</sup>:

Հուլիսի 14-ին կնքված նախնական համաձայնությանը, սակայն, երկար կյանք չէր վիճակված, քանզի այն նախ և առաջ ու գլխավորապես ձեռնտու չէր Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը: Այսպես՝ դեռ հունիսի 22-ին Ս. Տեր-Գաբրիելյանին և ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին հղված հեռագրում Ալ. Մյասնիկյանը նշում էր, որ Փափագյանի դիմումը պետք է անպատասխան թողնվի, քանզի ՀԿԿ-ն ՀՅԴ-ի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չի եղել և չի լինի, և նա նույնիսկ բանակցություններին չպետք է մասնակցի, ծայրահեղ դեպքում կարող է խոսել դաշնակների հետ՝ մասնավոր կարգով Մոսկվայում նստած<sup>8</sup>: Իսկ մինչ այդ՝ հունիսի 20-ին, ՀԿԿ ԿԿ-ն որոշել էր պաշտոնական բնույթ չտալով հանդերձ Մոսկվայում բանակցել դաշնակցականների հետ՝ տեղեկատվություն ստանալու նպատակով: Այս առումով լրացուցիչ հրահանգավորվեց Ս. Տեր-Գաբրիելյանը, և ուժեղացվեցին Զանգեզուրում տարվող աշխատանքները<sup>9</sup>: Իսկ արդեն օգոստոսի 2-ին Մյասնիկյանի զեկույցից հետո Ա. Կարինյանին հանձնարարվեց ՌԿ(Բ)Կ ԿԿ ուղարկելու համար կազմել ՀՅԴ-ի մասին ավելի հիմնավորված գրություն<sup>10</sup>:

Իրավիճակը կտրուկ փոխվեց Զանգեզուրի ապստամբության ավարտով: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ ՀԿԿ ԿԿ քարտուղար Ս. Լուկաշինը հուլիսի 16-ին Գ. Զիչերինին հեռագրեց, որ «Զանգեզուրը բոլորովին լիկվիդացված է», և Ռիգայի բանակցությունները համարում է «անիմաստ և նույնիսկ վտանգավոր»<sup>11</sup>: Ելնելով դեպքերի ընթացքից՝ Քաղբյուրոն մերժեց

6 Արձանագրությունները մանրամասն տես նույն տեղում, գ. 192, թթ. 1-8, գ. 193, թթ. 1-2:

7 Նույն տեղում, գ. 191, թթ. 30-36:

8 Տես նույն տեղում, թթ. 17-18:

9 Տես նույն տեղում, ֆ. 1, գ. 1, գ. 40, թ. 17:

10 Տես նույն տեղում, թ. 51:

11 Տես նույն տեղում, ֆ. 1457, գ. 1, գ. 191, թ. 28:

հուլիսի 26-ին Իոֆֆեի վավերացրած համաձայնագրի նախագիծը<sup>12</sup>: Փաստորեն, ՀԿԿ-ն դեմ էր ՀՅԴ լեգալացմանը, քանզի առնվազն մրցակից կհայտնվեր: Այս հարցում նրան աջակցում էր Կովկասյան բյուրոն, որը, անտեղյակ Քաղբյուրոյի որոշմանը, Մյասնիկյանի հուլիսի 30-ի գեկուցումից հետո որոշեց ՌԿ(Բ)Կ ԿԿ-ին տեղեկացնել, որ լիովին համաձայն է ՀԿԿ դիրքորոշմանը, որովհետև ՀՅԴ լեգալացման շուրջ ցանկացած բանակցություն կբարոյալքի Հայաստանում տարվող աշխատանքը: Ըստ այդմ՝ լեգալացումը համարում էին անհնարին և խնդրում դադարեցնել ՀՅԴ-ի հետ որևիցե բանակցություն վարելը<sup>13</sup>:

Ալ. Մյասնիկյանը, 1921 թ. հուլիսի 25-ին Ս. Տեր-Գաբրիելյանին հայտնելով նորությունների մասին, նշում էր. «Զանգեզուրում մենք վերջնականապես ջախջախել ենք դաշնակներին, Զանգեզուրը այժմ ամբողջովին գտնվում է մեր ձեռքում»<sup>14</sup>: Ապա խորհուրդ էր տալիս «ոչ մի դեպքում» թույլ չտալու Դրոյի վերադարձը Հայաստան և գերծ մնալու վերջինիս հետ որևէ սերտ քաղաքական կապի պահպանումից<sup>15</sup>: ՀԿԿ ԿԿ-ն 1921 թ. հունիսի 27-ին, քննելով Զանգեզուրում իշխանության կազմակերպման հարցը, որոշեց արտակարգ լիազոր նշանակել Պ. Մակինցյանին, Հեղկոմի նախագահ՝ Դ. Տեր-Սիմոնյանին<sup>16</sup>: Ավելի ուշ՝ 1922 թ. հունվարի 26-ին, ՀԿԿ 1-ին համագումարում Լուկաշինը, խոսելով Զանգեզուրի հաղթանակի մասին, ծափահարությունների ներքո շեշտում էր. «Մենք զիջման կգնանք անգամ կուսակների նկատմամբ, սակայն ոչ դաշնակների»<sup>17</sup>: Իսկ արդեն համագումարի արդյունքների ամփոփմանը նվիրված հողվածում խստորեն քննադատելով ՀՅԴ-ին՝ Լուկաշինը անհրաժեշտ էր համարում այն «կազմալուծել ու վարկաբեկել կարմիր գծից այն կողմ՝ արտասահմանում, որտեղ նա զգալի արմատներ ուներ, և վերստին կարող է ուշքի գալ և բարենպաստ պայմաններում նոր կամպանիա սկսել Խորհրդային Հայաստանի դեմ»<sup>18</sup>:

Այսպիսով, արտաքին (Ռիգայի բանակցություններ) և ներքին (Զանգեզուրի հերոսամարտ) խնդիրները կարգավորելով, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը ձեռնամուխ եղավ ՀՅԴ գաղափարաքաղաքական և բարոյական «լիկվիդացմանը»:

12 Տե՛ս նույն տեղում, թ. 29:

13 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1021, ց. 2, գ. 1187, թ. 13, Российский государственный архив социально-политической истории (далее – РГАСПИ), ф. 85, оп. 18, д. 60, л. 29:

14 ՀԱԱ, ֆ. 1444, ց. 1, գ. 6, թ. 1:

15 Տե՛ս նույն տեղում:

16 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 17:

17 Նույն տեղում, ց. 2, գ. 1, թթ. 2-3:

18 **Լուկաշին Ա.**, Հողվածներ, գեկուցումներ, ճառեր, Եր., 1986, էջ 21: Տե՛ս նաև «Известия ЦК КП(б)А», Ер., 1922, N 1, էջ 7-13:

## 2. «Աշխատավոր» դաշնակցականների հանելուկը

Այսպես կոչված «ձախկիկությունը» ՀՅԴ շարքերում բավականին նվազ էր, թեև, օրինակ, խորհրդայնացման առաջին իսկ օրը՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին, նման փոքրիկ մի խումբ՝ Հայաստանի ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների խորհուրդը, որոշեց «ներքին պայքարից հետո վերջնականապես խզել կապը պաշտոնական Դաշնակցության հետ», ողջունեց խորհրդայնացումը և Կոմունիստական ինտերնացիոնալը. «Այսօր նոր արև է բարձրանում մեր երկրի վրա»<sup>19</sup>:

Առավել մեծաքանակ ու ազդեցիկ էր, այսպես կոչված, «աշխատավորական» հոսանքը: Խորհրդային իշխանության վերաբերյալ հատուկ դիրքորոշում ունեցող ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտեն, որը «աշխատավորական» ձախ թևի անունից 1921 թ. ընդունել էր հռչակագիր նոր կարգերի ճանաչման վերաբերյալ: Քննադատելով ՀՅԴ անցյալ ու ներկա գործունեությունը՝ կոմիտեն խոստանում էր նպաստել նոր իրավակարգի հաստատմանն ու ամրապնդմանը: Նրանք կուսակցության շարքային անդամներին առաջարկեցին խզել կապերը ՀՅԴ-ի հետ: Այդ առաջարկը ստորագրել էր ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտեի ողջ կազմը՝ Կորյուն Ղազարյանի գլխավորությամբ՝ 8 հոգի<sup>20</sup>: Իսկ 1922 թ. հունվարի 12-ին դիմելով Մյանսիկյանին՝ խնդրում էին իրենց արտոնել կատարյալ լեգալացում և «Աշխատավոր» թերթի վերահրատարակման թույլտվություն<sup>21</sup>:

Կոմկուսի Անդրկովկասի երկրամասային կոմիտեի (Անդրերկրկոմ) նախագահությունը 1922 թ. մայիսի 20-ին հնարավոր համարեց «Աշխատավոր» խմբակի լեգալացումը ողջ Անդրկովկասում, որի հետ կապի պատասխանատու նշանակվեց Ար. Աթաբեկովը<sup>22</sup>: Անդրերկրկոմի պլենումը 1922 թ. հունիսի 4-5-ը որոշեց լեգալացումը թույլատրել Վրաստանի տարածքում, իսկ Ադրբեյջանում և Հայաստանում հարցի լուծումը թողնել նրանց կենտկոմների որոշմանը: ՀԿԿ ԿԿ պլենումը 1922 թ. հունիսի 5-ին, քննելով «ձախ դաշնակների» լեգալացման մասին որոշումը, աննպատակահարմար համարեց այն և հարցը վերանայելու խնդրանքով դիմեց Անդրերկրկոմին<sup>23</sup>: Արդեն օգոստոսի 4-ին Անդրերկրկոմը ԱնդրՉեկայի պետ Մոգիլևսկու զեկույցից հետո նախկին որոշումը չեղյալ համարեց<sup>24</sup>: Անդրկովկասի միութենական խորհուրդը 1922 թ. մայիսի 8-ին դիմել էր Թեհրանում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցչին, որպեսզի վերջինս կապվի իրանական կառա-

19 ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 185:

20 Տե՛ս նույն տեղում, գ. 190, թթ. 1-8, «Կարմիր Աստղ», Թիֆլիս, 1921, ապրիլի 9:

21 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 203, թթ. 1-4:

22 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 10, թ. 27:

23 Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 10:

24 Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 36:

վարության հետ՝ «Հայաստանի և Պարսկաստանի սահմանի վրա դաշնակների ջոկատների լիկվիդացման հարցով»<sup>25</sup>:

1923 թ. փետրվարի 13-ի ՀԿԿ 2-րդ համագումարում Լուկաշինը, կրկին անդրադառնալով հարցին, շեշտեց, որ կտրուկ դեմ են «ձախ դաշնակների» լեգալացմանը, քանզի նրանք մյուսներից տարբերվում են միայն նրանով, որ «խելացի են», Հայաստանում նրանք «հիմք չունեն», իսկ Ջենալի սպանությունը «փայլուն ապացուցեց», որ նրանք ձգտում են անելու իրենց գործը «մեզնով քողարկվելով»<sup>26</sup>:

«Ձախ դաշնակների» լեգալացման խնդրի վրա բացասաբար ազդեց Թիֆլիսում 1922 թ. հուլիսի 25-ին Ջենալ փաշայի սպանությունը, ինչի համար մեղադրվեցին դաշնակցականները: Եվ արդեն օգոստոսի 4-ին Անդրերկրկոմի նախագահությունը, լսելով ԱնդրՉեկայի պետ Մոգիլևսկու հաղորդագրությունը, անհրաժեշտ գտավ չեղյալ համարել մայիսի 20-ի նախնական որոշումը: Դաշնակցականների ձերբակալության գործի ղեկավարումը հանձնարարվեց բռնաձնշումներում փորձառու Գ. Աթաբեկովին և որոշվեց նրանց արքայի Ռուսաստան<sup>27</sup>: ՀԿԿ ԿԿ-ն օգոստոսի 1-ին, լսելով ՀայՉեկայի պետ Շ. Ամիրխանյանի զեկույցը Ջենալ փաշայի սպանության մասին, թույլատրեց դաշնակցականների մասնակի ձերբակալությունը<sup>28</sup>:

Այս հարցում վերջակետ դրեց ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն: 1922 թ. օգոստոսի 7-ի նիստին Ստալինի և Կարախանի զեկույցամբ լսելով «Ջենալի և դաշնակների մասին» հարցը՝ Քաղբյուրոն որոշեց կառավարական հաղորդագրության մեջ շեշտել, որ սպանությունը անգլիացիների դրդմամբ կատարել են դաշնակցականները<sup>29</sup>: Բանտարկվեց ավելի քան 200 դաշնակցական, իսկ կառավարական հաղորդագրությունն այդպես էլ չիրապարակվեց: Եվ ահա բանտարկված ընկերներին ազատելու և Խորհրդային Միությունում ՀՅԳ-ի հանդեպ բացասական վերաբերմունքը մեղմելու նպատակով «աշխատավորականները» Դրոյի գլխավորությամբ 1923 թ. մայիսին գրեցին դեկլարացիա<sup>30</sup>: ԽՍՀՄ Չեկայի արևելյան բաժնի պետ Պետերսն արդեն մայիսի 26-ին դեկլարացիայի մասին տեղեկացրեց ՌԿ(բ)Կ ԿԿ-ին<sup>31</sup>: Հիշյալ հարցին համամիտ էր Ս. Օրջոնիկիձեն, որը համաձայնել էր ազատ արձակել ձերբակալված դաշնակցականներին<sup>32</sup>: 1923 թ. հուլիսի 23-ին Անդրերկրկոմի նախագահությունը, քննելով «Անդրկովկասյան դաշնակների մասին» հարցը, խնդրին տվեց դրական լուծում

25 Նոյն տեղում, ֆ. 1021, ց. 2, գ. 1334: Տե՛ս նաև ԲԳԱՍՍԻ, ֆ. 85, օպ. 24, ձ. 520, լ. 5:

26 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 1, թ. 6:

27 Տե՛ս նոյն տեղում, ց. 2, գ. 10, թ. 36, ֆ. 1021, ց. 2, գ. 342, թթ. 2-3, ԲԳԱՍՍԻ, ֆ. 85, օպ. 24, ձ. 281, լ. 16:

28 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 49:

29 Տե՛ս ԲԳԱՍՍԻ, ֆ. 17, օպ. 3, ձ. 308, լ. 3:

30 Տե՛ս Վիրաբեան Ա., Դրոն եւ խորհրդային իշխանութիւնը, «Դրօշակ», Եր., 1998, N 5, էջ 31-33:

31 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 40:

32 Տե՛ս նոյն տեղում, թ. 48:

որոշելով դեկլարացիայից հետո Դրոյին և Կ. Ղազազյանին թույլատրել մեկնել արտասահման, միաժամանակ Չեկայի մարմիններից ցուցում տալով հետևելու դաշնակցականների ստանձնած պարտավորությունների կատարմանը<sup>33</sup>: 1923 թ. հուլիսի 26-ին Վրաստանի Չեկան ազատ արձակեց դաշնակցականներին: Ինչ վերաբերում է Անդրերկրկոմի որոշմանը, ապա ՀԿԿ ԿԿ-ն հուլիսի 30-ին, այն ի գիտություն ընդունելով հանդերձ և իր իրավունքները «տոնահարված» համարելով, Անդրերկրկոմին խնդրեց հետագայում ՀՅԴ-ի վերաբերյալ հարցերը քննարկել իր հետ<sup>34</sup>:

Ինչ էր ներկայացնում Դրոյի դեկլարացիան: Դրանում անցյալը ներկայացվում էր չեզոք դիրքից՝ բոլորովին չքննադատելով ՀՅԴ-ին, հույս էր հայտնվում, որ իշխանությունը կամրապնդի հայերի քաղաքական անկախ գոյությունը, կրթելավի գաղթականների վիճակը, Ռուսաստանն այդուհետ «Հայաստանի հողից ոչ մի թիզ չի զիջի ոչ ոքի», և նշվում, որ ընդմիջտ հրաժարվում են Խորհրդային Միության դեմ կռվելուց, քանզի նրանից է կախված հայ ժողովրդի վիճակը<sup>35</sup>: Փաստացի դրանում հակադաշնակցական և քննադատական միտք չկար: Հենց այդ պարագան քննադատեց Աշ. Հովհաննիսյանը: Նա նշում էր, որ դա բխում է ՀՅԴ «ներկա մտայնությունից և համապատասխանում է ուժերի կուտակման նրա տակտիկային, դեկլարացիան ոչնչից չի հրաժարվում, իսկ արած հայտարարությունը պարտավորություն է բարդում խորհրդային իշխանության վրա»<sup>36</sup>:

### 3. Ամեն գնով լիկվիդացնել Դաշնակցությունը

1921 թ. հունիսի 16-ին Կովկասյան բյուրոյի նախագահությունը, քննելով կոմկուս ընդունվելու մասին ՀՅԴ-ից հեռացածների դիմումը, որոշեց, որ հարցը վերաբերում է Վրաստանի կոմկուսի գործունեության տարածքին, և պետք է դիմեն նրա կենտկոմին<sup>37</sup>: ՀԿԿ ԿԿ քարտուղարությունը 1921 թ. նոյեմբերի 22-ի նիստում որոշեց կազմակերպել ՀՅԴ հասարակական դատ և խորհրդայնացման տարեդարձը նշող հանձնաժողովին հրահանգեց այն կատարել «որքան հնարավոր է բովանդակալից»<sup>38</sup>:

Դեկտեմբերի 1-ին սկսված «դատը» դատարանի կազմով «պատկառազդու» էր<sup>39</sup>: Բավական է նշել, որ նախագահը կառավարության փոխնախագահ Դ. Տեր-Սիմոնյանն էր, անդամները՝ խորհրդային ղեկավար գործիչներ Ս. Մարտիկյանը, Պ. Մակինցյանը, Հ. Ազատյանը, մեղադրող-

33 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 39:

34 Տե՛ս նույն տեղում, գ. 7, թ. 34:

35 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», Եր., 1923, հուլիսի 31, «Заря Востока», Тифлис, 31 июля:

36 «Խորհրդային Հայաստան», 1923, օգոստոսի 1, հոկտեմբերի 4, «Մարտակոչ», Թիֆլիս, 1923, օգոստոսի 3:

37 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1187, թթ. 8, 18, 24, 60, 85:

38 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 44, թ. 38:

39 Մանրամասն տե՛ս Դաշնակցություն կուսակցության դատը, «Խորհրդային Հայաստան», 1921, նոյեմբերի 27, դեկտեմբերի 1, 3, 4, 9, 13:

ները՝ Ար. Երզնկյանը, Ս. Մարգարյանը, իսկ պաշտպանները՝ Աշ. Հովհաննիսյանը և Ավիսը: Կազմն արդեն իսկ վկայում էր, թե նոր իշխանությունները ինչ կարևոր նշանակություն էին տալիս ՀՅԴ գաղափարական «ջախջախմանը»:

Սկսվեց ՀՅԴ համատարած «քայքայման» աշխատանք: ՀԿԿ ԿԿ նախագահությունն օգոստոսի 27-ին լսեց այդ ուղղությամբ արված աշխատանքների մասին Շահումյանի զեկույցը<sup>40</sup>: Կատարվող աշխատանքի մասին հիշատակվում էր նաև ՀԿԿ ԿԿ հուլիս-սեպտեմբերի հաշվետվության մեջ, որում շեշտվում էր, որ Դրոյի «ձախերը» ձգտում են պահպանելու իրենց կուսակցության կազմակերպչական կառույցը, որի դեմ անհրաժեշտ է պայքարել<sup>41</sup>: ՀԿԿ ԿԿ նախագահությունը 1923 թ. հոկտեմբերի 2-ին, քննելով Ռուսաստանում բանտարկված դաշնակցականների ազատման հարցը, որոշեց Կենտրոնական ստեղծել հանձնաժողով՝ Ս. Համբարձումյան, Ս. Մելիք-Օսիպով, Ա. Շահումյան կազմով, իսկ ՀՅԴ քայքայման հարցով՝ հանձնաժողով՝ Շ. Ամիրխանյան, Ա. Կարինյան, Ա. Շահումյան կազմով<sup>42</sup>:

Հայ կոմունիստները շտապում էին: 1923 թ. սեպտեմբերի 22-ին Շահումյանը Անդրերկրյանի քարտուղար Մյասնիկյանին տեղեկացրեց, որ նկատվում է ՀՅԴ «ուժեղացված քայքայում, որը լայն չափ է ընդունում, այդ ուղղությամբ աշխատում են մեր բոլոր կուսակցական կազմակերպությունները և հեռացած դաշնակները», և, շեշտելով «նախկինների» համագումարի հրավիրման անհրաժեշտությունը, խնդրում էր հատկացնել 5.000 ռուբլի ոսկով<sup>43</sup>: Արդեն հոկտեմբերի 5-ին Անդրերկրյանի քարտուղար Մ. Օրախելաշվիլին հայտնեց, որ անհրաժեշտ բոլոր միջոցները կհատկացվեն<sup>44</sup>: Ի լրումն դրա՝ հոկտեմբերի 20-ին Մյասնիկյանն ուղարկեց 25 մլրդ ռուբլի<sup>45</sup>: Փաստորեն, իրենց համար ռազմավարական նշանակություն ունեցող ՀՅԴ «լիկվիդացման» գործում կոմունիստները, չնայած Անդրկովկասի ֆինանսական ոչ բարվոք վիճակին, հատկացվելիք գումարի առումով ժլատություն թույլ չէին տալիս: Այդ հարցը հատուկ քննարկվեց Անդրերկրյանի քարտուղարության նիստում և դրական ընթացք ստացավ<sup>46</sup>: Սակայն հատկացված փողերն արագորեն ծախսվում էին, և ՀԿԿ ԿԿ-ն Անդրերկրյանից անընդհատ նոր գումարներ էր խնդրում՝ պարտադիր շեշտելով «փող չկա» արտահայտությունը<sup>47</sup>: Վեր-

40 Տե՛ս նույն տեղում, ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 42:

41 Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 6:

42 Տե՛ս նույն տեղում, գ. 7, թ. 48:

43 Տե՛ս նույն տեղում, գ. 19, թ. 80:

44 Տե՛ս նույն տեղում, թ. 85:

45 Տե՛ս նույն տեղում, թ. 103:

46 Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 86:

47 Տե՛ս, օրինակ, նույն տեղում, գ. 19, թթ. 137, 141, 144, 167:



ջապես, հարկ է նշել, որ Հայաստանում կատարվող քայքայման աշխատանքները Անդրերկրկոմի հսկողության ներքո էին, և ՀԿԿ ղեկավարությունը մշտապես հաշվետվություն էր ներկայացնում: Անդրերկրկոմի նախագահությունը 1923 թ. սեպտեմբերի 12-ին «սպիտակ սպաների մասին» Մյաննիկյանի զեկուցումից հետո որոշեց, որ «դաշնակցական Հայաստանի սպաներին» ոչ մի դեպքում չեն կարող հավասարեցնել «սպիտակ գվարդիականներին», ուստի նրանք կարող են ծառայել Կարմիր բանակում: Իսկ Լուկաշինը տեղեկատվություն հաղորդեց Հայաստանում ընթացող դաշնակցականների քայքայման աշխատանքի մասին<sup>48</sup>:

Հայ գործընկերների հետ իրենց փորձն էին փոխանակում վրաց կոմունիստները: ՀԿԿ ԿԿ գործերի կառավարիչը Թիֆլիսի կոմիտեի քարտուղարությանը 1923 թ. հոկտեմբերի 1-ին խնդրեց ուղարկել նախկին մենշևիկների բոլոր շրջանային կոնֆերանսների հաշվետվությունների 10 օրինակ, քայքայման կազմակերպական սխեմաները և լիկվիդացիոն մարմինների գործունեության վերաբերյալ նյութերը<sup>49</sup>:

Այսպիսով՝ գաղափարական «թշնամիների» դեմ պայքարում նպատակը մեկն էր, և գործը՝ ընդհանուր: Համաձայն ժամանակի ավանդույթի՝ ՀՅԴ-ի դեմ պայքարի առաջին գծում Հայաստանի Չեկան էր: Այս առումով ուշագրավ է Չեկայի՝ 1923 թ. օգոստոսի 29-ի խիստ գաղտնի, ծածկագրին հավասար՝ «Ինչպես համակարգել դաշնակցության քայքայման գործում Չեկայի և գավկոմների աշխատանքը» խոստում վերնագրով հրահանգը: Դրանով չեկիստներին ցուցում էր տրվում ամեն ինչում համագործակցելու գավկոմների հետ: Ընդ որում, հրահանգվում էր ողջ աշխատանքը կատարել «խստագույն գաղտնապահության պայմաններում, որպեսզի դաշնակցականները չհասկանան, որ դա Չեկան է իրականացնում»<sup>50</sup>: Աշխատանքի համակարգմանն ու ամրապնդմանն էին վերաբերում ՀԿԿ ԿԿ երկու խիստ գաղտնի հրահանգները, որոնք, փաստորեն, տեղական մարմինների համար ուղենիշ էին<sup>51</sup>:

Չեկան ՀՅԴ-ի դեմ պայքարում էր նաև արտասահմանում, արդեն՝ մոսկովյան վերադասի անմիջական հսկողությամբ: Այսպես՝ Պարսկաստանում հաջողվել էր ձեռք բերել տեղի դաշնակցական մարմինների գրագրությունը և ծածկագրերը: Հաշվի առնելով, որ «դաշնակները չափազանց վճռական մարդիկ են և անհատական տեռորից բացի շնորհիվ իրենց քանակի, կազմակերպվածության և լավ կապերի» կարող էին վտանգ ներկայացնել պատերազմի ժամանակ, Չեկան խնդիր էր դրել

48 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1021, ց. 2, գ. 1363, թթ. 4, 27, РГАСПИ, ֆ. 85, օп. 24, л. 283, л. 26:

49 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 19, թ. 87, գ. 20, թ. 72:

50 Նույն տեղում, գ. 14ա, թթ. 4-8:

51 Տե՛ս նույն տեղում, գ. 14, թթ. 35-36:

«քայքայել նրանց, ստորին խավին թեքելով իրենց կողմը»<sup>52</sup>: Այդ նպատակով օգտագործվում էին նախկին գործիչներ (օրինակ՝ Արշակ Ղազարյանը<sup>53</sup>): Ալ. Մյասնիկյանը 1923 թ. հոկտեմբերի 1-ին ամերիկահայ կոմունիստ Մնարյանին (նախկին դաշնակցական) հայտնում էր. «Դաշնակները քայքայվում են միանգամայն, Դրոյի գրուպան դեկլարացիա բաց թողեց, որ հրաժարվում է նախկին քաղաքականությունից»<sup>54</sup>: Նա անհրաժեշտ էր համարում, որ ԱՄՆ-ում «ամեն կերպ շահագործվի այդ քայքայումը»՝ խորհուրդ տալով «խիստ կովել ձախ դաշնակների դեմ, նրանց մերկացնել Եվրոպայում»<sup>55</sup>:

ՀԿԿ-ի և Չեկայի քայքայիչ աշխատանքի արդյունք էին նախկին դաշնակցականների անհատական կամ խմբակային «լիկվիդացիոն» հայտարարությունները, դիմումները և նամակները, կոչերը, որոնք հրապարակվում էին նաև մամուլում<sup>56</sup>: Վերջապես, նրանք լրացնում էին հատուկ հարցաթերթիկ՝ նշելով ՀՅԴ-ից հեռանալու պատճառը<sup>57</sup>: Այդ հարցաթերթիկների թռուցիկ ուսումնասիրությունն անգամ վկայում է դրանց շինծու և պարզունակ լինելը:

ՀՅԴ-ի դեմ պայքարի մասշտաբայնության մասին են վկայում Հայաստանի ամենատարբեր շրջաններում գումարված «նախկինների» կոնֆերանսները և հաշվետու զեկուցումները<sup>58</sup>:

Անդրերկրկումի քարտուղարությունը 1923 թ. մայիսի 25-ին Ալ. Մյասնիկյանի առաջարկով հրահանգեց հանրապետական կենտկոմներին Կ. Պոլիս ուղարկել հրատարակություններից 10-ական օրինակ, երկրամասային մամուլ, այդ թվում՝ «Մարտակոչ»<sup>59</sup>: Իսկ հունիսի 6-ին որոշեց, որ արտասահմանյան մամուլի բաժանորդագրման իրավունք ունեն Անդրերկրկումը, հանրապետական կենտկոմները և կուսակցական թերթերը, և ԱնդրՉեկային առաջարկեց «անարգել թույլատրել բաժանորդագրել կոմունիստական թերթեր մասնավոր անձանց»<sup>60</sup>:

Փաստորեն, ինչպես ընդունված էր ժամանակին ասել, աշխատանքներն ամուր հիմքերի վրա էին դրված: ՀՅԴ-ից հեռացողների մեջ զգալի էր բանտարկվածների և արստրվածների թիվը, որոնց համար ազատություն

52 Агабеков Г., ГПУ. Записки чекиста, Париж, 1930, с. 116, 132. Այդ գաղտնի նամակագրության էական մասը պարտադիր կարգով ուղարկվում էր Մյասնիկյանին (տես ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 7գ):

53 Մանրամասն տես **Ղազարեան Ա.**, Ազատութեան ուղին եւ հայի քաղաքական վարքագիծը, Թեհրան, 1924, Ս. Կրացեանը եւ անցեալի իրողութիւնները, Թեհրան, 1925, Մոմենտը պահանջում է, Թեհրան, 1926, Հ. Յ. Ղազնակցութեան արդի քաղաքականութիւնը, Թեհրան, 1928:

54 ՀԱԱ, ֆ. 1435, ց. 1, գ. 74, թթ. 1-2:

55 Նոյն տեղում:

56 Տես, օրինակ, նույն տեղում, ֆ. 1, ց. 3, գ. 14ա, թթ. 9-12, ֆ. 4047, ց. 1, գ. 209, թթ. 1-12, գ. 208, թթ. 1-66, գգ. 210, 232, «Նորհրդային Հայաստան», 1923, թթ. 167, 174, 183-190, 194, 197-200, 210-215, 218, 220-231, 234, 238, 240-245, «Բանվոր», Լենինական, 1923, թթ. 53, 70-74:

57 Տես ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 224, թթ. 1-122, գ. 225, թթ. 1-126, գ. 226, թթ. 1-189, գ. 227, թթ. 1-176:

58 Տես նույն տեղում, ֆ. 1, ց. 3, գ. 14ա, թթ. 13-19, 22-23, 26, 33, 42, 54, 57, ֆ. 1457, ց. 1, գ. 219:

59 Տես նույն տեղում, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 79:

60 Տես նույն տեղում, թ. 81:

ստանալու միակ հնարավորությունը «հրաժարական» տալն էր: Այս կարգն ամրագրվեց Անդրերկրկոմի նախագահության 1923 թ. հոկտեմբերի 14-ի որոշմամբ: Նրանում քննելով «դաշնակների և մենշևիկների մասին» ՌԿ(Բ)Կ ԿԿ դիմումը՝ որոշվեց հնարավոր համարել ազատել այն դաշնակցականներին, որոնք հայտարարել էին Դրոյի դեկլարացիային միանալու մասին<sup>61</sup>:

Ի վերջո, ՀՅԴ քայքայման աշխատանքի գազաթնակետը նախկին դաշնակցականների համագումարն էր: Իսկ այն կոմունիստական ոգուն համապատասխան անցկացնելու համար ստեղծվել էին մի քանի հատուկ մարմիններ: Իր նշանակությամբ և դիրքով առաջին տեղում էր ՀԿԿ կենտկոմին կից Դաշնակցության քայքայման եռյակը՝ կենտկոմի քարտուղար Շահումվարյան, Չեկայի փոխնախագահ Ս. Մելիք-Հովսեփյան և նախկին դաշնակցական Ավայան: Այս մարմինը մշակեց և հաստատեց իրականացվելիք միջոցառումների ողջ համակարգը<sup>62</sup>: Մասնավորապես, 1923 թ. հոկտեմբերի 3-ի նիստում եռյակը հաստատեց քայքայման նախահաշիվը՝ 16.020 ռուբլի 63 կոպեկ չերվոնեցով, որն ակնկալում էին ստանալ Անդրերկրկոմից, իսկ մինչ այդ միջոցներ պետք է գտնեին կառավարության օգնությամբ: Գավառներում աշխատանքը համակարգելու համար գավկոմների քարտուղարները պետք է կազմակերպեին հատուկ բյուրո և տեղական համագումարներ:

Հաջորդ մարմինը ՀՅԴ լիկվիդացիոն բյուրոն էր, որը կոչվում էր նաև ՀՍԽՀ նախկին դաշնակցականների համագումար նախաձեռնող բյուրո: Բյուրոյի նախագահը 1915 թվականից ՀՅԴ անդամ Ա. Բակունցն էր, անդամները՝ Ն. Կրմենանցը և Հ. Ավայանը: Ի դեպ, վերջինս ՀԿԿ ԿԿ ներկայացուցիչն էր: Բյուրոյի պարտականությունն էր զբաղվել «նախկիններով», ի մի հավաքել հեռացողներին, տալ ուղղություն: Որոշվեց աշխատանքին կանոնավորություն հաղորդելու նպատակով ստեղծել նաև «Դաշնակցության քայքայման պատմության հանձնաժողով», ինչը չկատարվեց: Շրջաններում բացվեցին տեղական բյուրոներ, որոնց աշխատանքի համար մշակվեցին կազմակերպչական հրահանգներ և «Դաշնակցության քայքայման կառուցվածք»<sup>63</sup>: Ի դեպ, համագումարի պատգամավորները օրական պետք է ստանային 1 ռուբլի 20 կոպեկ չերվոնով, ինչը ժամանակի համար զգալի գումար էր: Այսինքն՝ ՀՅԴ-ի դեմ պայքարում կոմկուսն օգտագործում էր նաև նյութական շահագրգռման գործոնը:

1923 թ. նոյեմբերի 20-23-ը Երևանի թատրոնում կայացավ «նախկին դաշնակների» համագումարը, որի 7 նիստերում «նախկինները», իրար հետ մրցելով, շտապում էին քննադատելու և մերկացնելու ՀՅԴ-ին: Ելույթ

61 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1021, ց. 2, գ. 1364, թթ. 3-4, ԲԴԱՍՍԻ, ֆ. 85, օր. 24, ձ. 283, լղ. 27-28:

62 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, գ. 3, գ. 14ա, թթ. 32, 39, 48-49:

63 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1457, ց. 1, գ. 212, թթ. 1-9:

ունեցան նաև Խորհրդային Հայաստանի ղեկավարներ Ս. Լուկաշինը և Ա. Մռավյանը<sup>64</sup>: Այսպիսով՝ 4032 անդամների մասնակցությամբ (247 պատգամավոր) համագումարը որոշեց Հայաստանում «լիկվիդացնել» ՀՅԴ բոլոր կառույցները՝ տեղեկացնելով այդ մասին 2-րդ Ինտերնացիոնալի բյուրոյին: Անդրերկրկումին, Մյասնիկյանին հայտնելով համագումարի ավարտի մասին Շահումյարյանը նոյեմբերի 23-ին շտապ հեռագրեց՝ «Դաշնակցության համար ընդունվել է մահացու բանաձև»՝ չնոռանալով կրկին փող խնդրել, քանզի «Կենտկոմի գանձարկղը դատարկ էր»<sup>65</sup>:

Ավարտելով տարիքավորների «լիկվիդացումը»՝ Անդրերկրկումը հարվածի ալիքն ուղղեց երիտդաշնակցականներին (դաշտումլիին): Այս հարցում «շեֆությունը» ստանձնել էր արդեն կոմերիտմիության կենտկոմը, որը դեռևս 1923 թ. հոկտեմբերի 16-ին որոշել էր «լիկվիդացնել Դաշերիտմիությունը»՝ ձևավորելով առանձին բյուրո<sup>66</sup>: Նախկին երիտդաշնակցականների համագումար նախաձեռնող բյուրոն ևս շատ ակտիվ գործունեություն էր ծավալել<sup>67</sup>: Ելնելով արդեն առկա փորձից՝ արվել էին նմանատիպ դիմումներ, հայտարարություններ, հղվել նամակներ, իսկ շրջաններում՝ կազմակերպվել ժողովներ<sup>68</sup>: Սակայն «նախկին» երիտասարդներն իրենց համագումարի հրավիրման հարցում այնքան էլ «բախտավոր» չէին: Չնայած ՀԿԿ ԿԿ-ն մի քանի անգամ դիմել էր Անդրերկրկումին՝ խնդրելով գումար տրամադրել, սակայն վերջինս միշտ մերժել էր՝ գտնելով, որ հարկ է քավարարվել կատարված նախապատրաստական աշխատանքներով<sup>69</sup>: Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը հաստատական մնաց, և 1924 թ. փետրվարի 1-3-ը կայացավ նախկին երիտդաշնակցականների «լիկվիդացիոն» համագումարը, որը համարվեց «մի խոշոր ակտ, որ մի անգամ ընդամիշտ ջնջում է արտասահմանյան ընկերների վերջին հույսը իրենց տիրապետության մասին»<sup>70</sup>:

Անդրերկրկումի նախագահությունը 1924 թ. փետրվարի 29-ին, լսելով Մյասնիկյանի գեկույցը «Զենալ փաշայի գրառումների» և Աշ. Հովհաննիսյանի դիմումի մասին, վերջինիս հանձնարարեց գրել նաև Հայկական հարցի պատմության մասին աշխատություն<sup>71</sup>:

64 Մանրամասն տե՛ս Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները, Եր., 1923, ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գգ. 220, 247:

65 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 19, թ. 144:

66 Տե՛ս նույն տեղում, գ. 14ա, թ. 40:

67 Մանրամասն տե՛ս նույն տեղում, ֆ. 4047, ց. 1, գ. 214, թթ. 1-11, գ. 216, թթ. 1-52:

68 Տե՛ս նույն տեղում, գ. 217, թթ. 1-64, գ. 218, թթ. 1-3:

69 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 100, գ. 4, գ. 13, թ. 4:

70 Համագումարի արձանագրությունները, գրագրությունը, դիմումները, հայտարարությունները, նամակները տե՛ս նույն տեղում, ֆ. 4047, ց. 1, գգ. 216-219, 222:

71 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 4, գ. 13, թ. 25: Տե՛ս նաև «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան: Վավերագրեր ինպերիալիստական պատերազմի շրջանից: Առաջ. Աշ. Հովհաննիսյան, «Հայոց հարց»-ի շարք, գիրք 1, Եր., 1926, Զենալ փաշա, «Հայկական հարցը»: Առաջ. Աշ. Հովհաննիսյան, «Հայոց հարց»-ի շարք, թ. 2, Եր., 1927:

#### 4. Շարունակել հարատև պայքարը Դաշնակցության դեմ

Թեև կարծես թե Հայաստանում դաշնակցական հարցն իսպառ լուծվեց, բայց ՀՅԴ «լիկվիդացիայով» նա իրոք «մահացա՞վ» Հայաստանում: Պատասխանը միանշանակ «այո» չի կարող լինել<sup>72</sup>: Կամա թե ականա այդ մասին է վկայում ՀԿԿ ԿԿ և Անդրերկրկոմի գործունեությունը: Այսպես՝ 1924 թ. մայիսին ՀԿԿ 3-րդ համագումարում Ս. Լուկաշինը և Աշ. Հովհաննիսյանը կրկին անդրադարձան ՀՅԴ-ի դեմ պայքարի ուժեղացման խնդրին: Լուկաշինը կարծում էր, որ գաղափարական մակարդակում թշնամի ՀՅԴ-ին հաղթելուց հետո աշխատելու պատրաստ տարրերին պետք է թեքել կոմկուսի կողմը: Ըստ նրա՝ ՀՅԴ քայքայման համար հենց սկզբից ձիշտ ուղիներ են գծվել, իսկ Դրոն և իր խումբը խորհրդային կողմնորոշում են ընդունել՝ նպատակ ունենալով փրկելու «իրենց հիմնական կապիտալը՝ ազգային անկախությունը», և պետք է պայքարել մինչև վերջ՝ ՀՅԴ-ին ջախջախելու համար<sup>73</sup>: Իսկ մինչ այդ անհրաժեշտ էր «գաղափարապես մշակել դաշնակցականներին»<sup>74</sup>: Պլենումն անհրաժեշտ համարեց խրախուսել խորհրդային և տնտեսական-արհմիութենական աշխատանքներին նրանց ակտիվ մասնակցությունը, քաղխմբակներում գաղափարական վերամշակման համար ներգրավումը, իսկ առանձին դեպքերում՝ կոմկուս և կոմերիտմիություն ընդունումը: Ինչ վերաբերում է բոլոր նախկիններին, ապա ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն հատուկ որոշել էր նրանց կոմկուս չընդունել: Միայն կոմկուսի օգտին 3-4 տարի աշխատած առանձին «երջանիկներին» թույլատրվեց բացառության կարգով, այն էլ՝ միայն իրենց հաստատմամբ: Այս մասին 1924 թ. հուլիսի 16-ին ՀԿԿ ԿԿ քարտուղար Աշ. Հովհաննիսյանը գաղտնի հրահանգեց գավկոմներին<sup>75</sup>:

Այսպես «նախկինների» համար կոմունիստ լինելը դարձավ գրեթե անհնարին: Եթե 1921 թ. «նախկինները» ՀԿԿ-ում կազմում էին 12, ապա 1923 թ.՝ ընդամենը 3 տոկոս<sup>76</sup>: Մինչդեռ, «մարսելով» Հայաստանում ՀՅԴ «լիկվիդացումը», Անդրերկրկոմի նախագահությունը 1924 թ. նոյեմբերի 19-ին անհրաժեշտ համարեց արտասահմանում ՀՅԴ-ն քայքայելու համար հրավիրել համագումար, որի կազմակերպման ղեկավարումը հանձնարարվեց Ա. Երզնկյանին և Ս. Փիրումյանին: Վերջինիս շտապ ընդունեցին կոմկուս: Անդրերկրկոմը հայտարարեց, որ ՀՀ և Ազգային պատվիրակությունները

72 ՀՅԴ տեսակետը տես **Նաասարդեան Վ.**, ՀՅԴ լիկվիդացիան, Գահիրե, 1924: Իսկ ՀՅԴ գործունեության մասին տես **Քիրոզեան Յ.**, Ուրուագիծ Հ. Յ. Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, Աթենք, 1988, էջ 71-86:  
 73 Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 1, թթ. 10-14, 31-32:  
 74 Տես նույն տեղում, գ. 7, թթ. 1-6:  
 75 Տես նույն տեղում, գ. 14, թ. 55:  
 76 Տես նույն տեղում, գ. 11, թ. 31:

չեն ներկայացնում Խորհրդային Հայաստանը<sup>77</sup>: Իսկ Իրանում, Եվրոպայում և ԱՄՆ-ում Անդրերկրկոմի միջոցներով և Չեկայի աչալուրջ հսկողության ներքո հրատարակվում էին հայերեն թերթեր, որոնք լծված էին ՀՅԴ-ի դեմ պայքարի գործին<sup>78</sup>:

Ձգտելով «նախկիններին» պահելու ազդեցության ուղորտում՝ Շահ-սուվարյանը («մասնագիտացել էր» ՀՅԴ քայքայման գործում) 1925 թ. հունվարի 30-ին հատուկ շրջաբերականով նշեց նրանց «գաղափարական գրավման» հրատապությունը: Այդ առթիվ անհրաժեշտ համարվեց նրանց «օգտագործել» խորհրդային հիմնարկներում և դպրոցներում<sup>79</sup>: Շահսուվարյանի նախագահությամբ ՀԿԿ ԿԿ-ում ստեղծվել էր «Նախկին դաշնակցականներին ՀԿԿ ընդունող հանձնաժողով», որը 1925 թ. փետրվարի 17-ին որոշեց «որոշ բանվորների և ինտելիգենտների» ընդունել կոմկուս և հաստատեց աշխատանքի ծրագիր<sup>80</sup>:

Չեկան քայքայիչ աշխատանք էր տանում նաև հյուսիսկովկասյան երկրամասում և Օդեսայում<sup>81</sup>: Անդրերկրկոմի նախագահությունը 1925 թ. փետրվարի 27-ին, լսելով Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում ՀՅԴ քայքայման աշխատանքների մասին ՀԿԿ ԿԿ որոշման հարցը, հավանություն տվեց և նրանց կոմկուսներին առաջարկեց մշակել համապատասխան աշխատանքի պլան: Կարևորելով ՀԿԿ ԿԿ նախաձեռնությունը՝ նրան հանձնարարվեց նաև ՀՅԴ քայքայման ուղղությամբ ԱնդրՉեկայում աշխատելու համար հատկացնել աշխատակից<sup>82</sup>: Այս փաստը մեկ անգամ ևս վկայում է, թե Հայաստանում ինչպես էր վերջնականապես «լիկվիդացվել» ՀՅԴ-ն, և ինչ աստիճանի էր նրան հասցված «մահացու» հարվածը: Վերջապես, 1925 թ. ողջ ընթացքում ՀՅԴ առաջին ճակատում էր Օրշոնիկիձեն, որը հազիվ էր գլուխն ազատել 1924 թ. մենշևիկյան ապստամբության ճնշմամբ<sup>83</sup>: Նա պարբերաբար էր քննադատում ազգային կուսակցություններին: Այսպես՝ Բաքվի 14-րդ կուսկոնֆերանսին՝ 1925 թ. հունվարի 29-ին, նա մասնավորապես նշում էր. «Մենշևիզմը ջախջախված է ֆիզիկապես և բարոյապես, նրանց դեմ անողոք, կործանիչ պայքար ենք մղելու, նրանցից դաժան թշնամի բանվոր դասակարգը չունի, դաշնակները իրենց մասին զգալ չեն տալիս, բայց ասել, որ նրանք չկան, չի կարելի»<sup>84</sup>: ՀՅԴ-ին նա քննադատեց նաև 1925 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի խորհրդայնացման 5-ամյակին նվիրված նիստում<sup>85</sup>:

77 Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 160:

78 Տե՛ս նույն տեղում, թթ. 183-184, 229:

79 Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 46, թ. 4:

80 Տե՛ս նույն տեղում, թթ. 5-6, 13:

81 Տե՛ս նույն տեղում, գ. 44, թթ. 107-108, գ. 46, թթ. 7-10:

82 Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 21, գ. 46, թթ. 11-12: Անձը պարզել չհաջողվեց:

83 Տե՛ս **Орджоникидзе Г.**, Избранные произведения, Ер., 1986, էջ 407-408, 429-431:

84 Նույն տեղում, էջ 407-408:

85 Տե՛ս նույն տեղում, էջ 429-431:

1926 թ. ընթացքում կտրուկ ակտիվացավ արտասահմանում ՀՅԴ-ի դեմ մղվող պայքարը, որի ղեկավարը 1924 թ. կոմունիստ դարձած Ս. Փիրունյանն էր: Նրան հաջողվեց Չեկայի օգնությամբ խորհուրդների կողմը գրավել Ջանգեզուրի հայտնի գործիչ Գերասիմ Աթաջանյանին՝ օգտվելով նրա ազգականների և մարտական ընկերների ձեռքակալման հանգամանքից<sup>86</sup>: Փաստորեն, ձերբակալությունները և գնդակահարության սպառնալիքները իրական միջոցներ էին ՀՅԴ-ի դեմ քայքայիչ աշխատանք տանելու համար: Չեկայի ուշադրությունից բնականաբար դուրս չէր մնացել նաև սահմանակից Պարսկաստանը: ՀՅԴ-ի մայիսի 28-ի տոնակատարության առթիվ ԽՍՀՄ դեսպան Յուրենսը պաշտոնական բողոք էր ներկայացրել Պարսկաստանի ԱԳՆ-ին: Գիլյանում խորհրդային հյուպատոս Լևիցկին ՀՅԴ քայքայման գործում օգտագործում էր նույնիսկ տեղի հնչակյաններին<sup>87</sup>: 1927 թ. նոյեմբերի 21-25-ը կայացած Անդրկովկասի կուսակցական կոյուբուրների 5-րդ համագումարը շեշտեց ազգայնական կուսակցությունների, այդ թվում՝ ՀՅԴ-ի դեմ մղվող պայքարի հաջողությունները, փաստեց էմիգրացիայի շրջանում նրանց քայքայումը և Անդրկովկասում գաղափարական ու կազմակերպչական ջախջախումը<sup>88</sup>: Անդրկովկասում ՀՅԴ-ի դեմ խորհրդային իշխանության պայքարում իսկապես «բեկման» տարի էր 1928 թվականը:

ՀԿԿ ԿԿ նախագահությունը 1928 թ. փետրվարի 28-ին, լսելով Չեկայի նախագահ Մելիք-Օսիպովի զեկույցը «դաշնականների և մենշևիկների մասին», հավանություն տվեց Չեկայի գործունեությանը, որոշեց ուժեղացնել աշխատանքը Թավրիզում, Երևանի համալսարանից հեռացնել «նախկիններից», ուսումնական հաստատություններից և խորհրդային հիմնարկներից՝ արքարվածների ազգականներին, կազմակերպել դասախոսություններ<sup>89</sup>: Ի դեպ, այդ փաստաթղթերը պահպանվում էին ծածկագրին հավասար և զետեղված էին գերգաղտնի «Հատուկ թղթապանակներում»:

Անդրերկրկոմի քարտուղարությունը 1928 թ. հուլիսի 11-ին, քննելով Էջմիածնի գավկոմի հաշվետվությունը, նշեց. «Էջմիածնի գավառը ինչպես անցյալում, այնպես էլ հիմա դաշնակցություն կուսակցության համար ռեզերվ է ծառայում: Գավառում կա 601 կոմունիստ, սակայն 600 դաշնակ: Դաշնակների ակտիվն քանակով և որակով ավելին է, քան կոմունիստներինը, նրանցը 120 է, մերը՝ 80: Դաշնակցություն կուսակցության անդամները իրենց գրագիտությամբ, ակտիվությամբ շարքերում ավելի բարձր են, քան մերոնք: Ուսուցիչների շրջանում դաշնակները լուրջ տոկոս են կազ-

86 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1, ց. 6, գ. 26ա, թթ. 16-17, 24-27, 48-56:

87 Տե՛ս նույն տեղում, թթ. 1, 18-20

88 Մանրամասն տե՛ս Пятый съезд коммунистических организации Закавказья, Тифлис, 1928, էջ 285, ՀԱՍ, ֆ. 1021, ց. 2, գ. 1441, թ. 1, ԲԳԱՍՊ, ֆ. 13, օպ. 1, ձ. 1956, ց. 1-8:

89 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1, ց. 8, գ. 31, թթ. 15-17:

մուն»<sup>90</sup>: Իսկ 1928 թ. հոկտեմբերի 17-20-ը Անդրերկրկոմի պլենումը նշեց, որ թեպետ ազգայնական կուսակցությունների քաղաքական պայքարը խորհրդային Անդրկովկասի դեմ «լիակատար ֆիասկո» է ապրել, բայց և այնպես, դա չի նշանակում, որ պայքարն ավարտվել է և շարունակվում է նվազ ակտիվությամբ գաղափարական ոլորտում մշակութային ներթափանցման միջոցով<sup>91</sup>:

Շրջադարձային եղավ 1928 թ. ՀԿԿ ԿԿ նոյեմբերյան պլենումը, որի ժամանակ քննարկվեց Ս. Կասյանի «Գաղափարական ճակատի խնդիրները» գեկույցը: Նա մասնավորապես նշում էր. «Առաջին թշնամական իդեոլոգիան, որ մեզ պետք է զբաղեցնի՝ դա դաշնակիզմն է: Դաշնակիզմը բուրժուական, հակաբանվորական, հակահեղափոխական վարդապետություն է, ազգայնական-շովինիստական բովանդակությամբ՝ ծածկված սոցիալիստական ֆրագտեոլոգիայի բարակ քողով: Նա հայ իրականության ֆաշիզմն է: Դաշնակցություն կուսակցությունը այսօր խոշոր բուրժուազիայի մարտական կուսակցությունն է: Ուշի ուշով հետևել և անխնա հարվածել դաշնակներին, անխնա իդեոլոգիական պայքար նրանց աշխարհայեցողության անկարողությունը ապացուցելու համար, չջողնել մարի բանվորա-գյուղացիության մոտ ատելության թոյնը, չխնայել պետության ոչ մի կոպեկը՝ հեղեղել գրական շուկան դաշնակիզմի մասին հանրամատչելի գրականությամբ»<sup>92</sup>:

Նույն կարծիքին էր նաև ՀԿԿ ԿԿ քարտուղար Ա. Խանջյանը, որը ՀՅԴ-ին որակեց որպես «ամենավտանգավոր թշնամի»<sup>93</sup>: Իսկ Անդրերկրկոմի քարտուղար Ռուբենը կարծում էր, որ ՀՅԴ-ի դեմ պետք է պայքարել հատկապես Չեկայի գծով<sup>94</sup>: Պլենումի բոլոր ելույթ ունեցողները քննադատեցին ՀԿԿ նախկին ղեկավարությանը ՀՅԴ-ի դեմ անբավարար պայքարելու համար և Կասյանի գեկույցը մեղմ համարեցին: Ընդունված բանաձևում նշվում էր. «Ռեզոլուցիան նացիոնալիզմը ամենացայտուն կերպով արտահայտում է դաշնակիզմը: Դաշնակցությունը հայ բուրժուազիայի կուսակցությունն է, հայ իրականության ամենաազդեցիկ ու ամենավտանգավոր հակահեղափոխական կուսակցությունը: Դաշնակցությունը կատարում է համաշխարհային իմպերիալիզմին սպասավորելու ամենաստոր պաշտոնը: Նա հայ իրականության ֆաշիզմն է»<sup>95</sup>: Փաստորեն, մինչ այդ մանրբուրժուական համարվող ՀՅԴ-ն «վերաճեց» խոշորբուրժուականի: Այդ

90 Նույն տեղում, ֆ. 1021, ց. 2, գ. 1445, թթ. 1-2:

91 Տե՛ս Октябрский пленум ЗКК ВКП(б), Тифлис, 1928, էջ 38:

92 ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թթ. 1-21:

93 Տե՛ս նույն տեղում, թթ. 25-32:

94 Տե՛ս նույն տեղում, թթ. 47-53:

95 Նույն տեղում, թ. 54:



որոշումը հիմք ընդունելով՝ 1929 թ. հունվարի 20-29-ը ՀԿԿ 6-րդ համագումարը «անողոք պայքար» սկսեց արդեն «Ֆաշիստ» դարձած ՀՅԴ-ի դեմ<sup>96</sup>:

ՀՅԴ-ին քննադատել պարտավորված էին խորհրդահայ բոլոր ղեկավար գործիչները: Ա. Մռավյանը մի շարք հոդվածներ գրեց, որոնցում խստորեն քննադատեց ՀՅԴ գործունեությունը և նրա վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ<sup>97</sup>: Նույն ակտիվությունը ցուցաբերեց նաև Ս. Կասյանը: Նա ինպերատիվ ոճով հռչակում էր. «Ով նրանց հետ է՝ մեր թշնամին է, ով մեզ հետ է՝ նրանց թշնամին է»<sup>98</sup>: Մեկ այլ հոդվածում նա քննադատությունն ավելի լայն համապատկերով էր ներկայացնում. «Խորասուզվելով դաշնակների պատմության մեջ – գլխավոր գործերի շարքը, և դուք անսահման զայրույթ ու խոր նողկանք կգգաք դեպի այդ ոճրագործ մարդիկ, նրանք միշտ եղել են ցավ ու կրակ, թվառության ու տանջանքի հեղինակ, կյանքի ու գոյության գերեզմանավոր, երկիրը ծածկեցին արյան ծովով, գանգերի կույտով, արցունքի գետերով: Ալեքսանդրապոլի դաշնագիրը եղավ այդ անգլուխ ու անսիրտ ավազակների աղետաբեր գործունեության գլուխգործոցը»<sup>99</sup>:

Խորհրդային Հայաստանի կառավարության նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանը խորհուրդների 6-րդ համագումարում՝ 1929 թ. ապրիլի 9-ին, քննադատելով ՀՅԴ-ին և անդրկովկասյան մյուս կուսակցություններին, շեշտում էր, որ Անդրկովկասի Դաշնությունը «նրանց ձգտումների, աշխատանքի և ստոր պրովոկացիայի դեմ ամրակուռ պատնեշ է»<sup>100</sup>: Իսկ 7-րդ համագումարում՝ 1935 թ. հունվարի 10-ին, հայտարարեց. «Երբ մենք ստեղծագործ աշխատում ենք ավելի զարգացնելու, ծաղկեցնելու սոցիալիստական հայրենիքը, Խորհրդային Հայաստանի երդվյալ թշնամիները՝ դաշնակները, շարունակում են մաշել ինպերիալիստական կառավարությունների դռները և դավեր լարել մեր իշխանության դեմ, վարկաբեկում են մեր հաջողությունները»<sup>101</sup>:

## Եզրակացություններ

Այսպիսով՝ կոմկուսի քաղաքականության հետևանքով ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ ամբողջ Խորհրդային Միությունում «ՀՅ Դաշնակցություն» կուսակցությունը՝ որպես կազմակերպական կառույց,

96 Տե՛ս նույն տեղում, ց. 9, գ. 7:

97 Տե՛ս **Մռավյան Ա.**, Մայիսյան օրեր, «Խորհրդային Հայաստան», 1922, մայիսի 10, Դաշնակցականներն ինչ են դավում, «Խորհրդային Հայաստան», 1923, մայիսի 20, Անցյալի ստվերներ, «Խորհրդային Հայաստան», 1923, մայիսի 26, Ազգերի ինքնորոշման իրավունքը և պ-րն Խատիսյանը, «Խորհրդային Հայաստան», 1928, հունիսի 15-16, Հողվածներ և ճառեր, Եր., 1961, էջ 103-108, 179-182, 183-186, 307-316:

98 **Կասյան Ա.**, Սրանք և մենք, «Կարմիր Աստղ», 1921, նոյեմբերի 19, Ընտիր երկեր, Եր., 1967, էջ 195-196:

99 **Կասյան Ա.**, Դաշնակների պրովոկացիայի նպատակը, «Կարմիր Աստղ», 1921, նոյեմբերի 22, Ընտիր երկեր, էջ 197-199:

100 «Խորհրդային Հայաստան», 1929, ապրիլի 11:

101 **Տեր-Գաբրիելյան Ա.**, Հողվածներ, ճառեր, փաստաթղթեր, Եր., 1979, էջ 142:

լիկվիդացվեց կամ վերացավ: Այդ ուղղությամբ, ինչպես տեսանք, պայքարի միջոցների և գործիքակազմի հարցում ոչ մի սահմանափակում չկար: Սակայն դա ամենևին չէր նշանակում, որ պայքարը ՀՅԴ-ի դեմ դադարեցվում էր: Դրա մասին վկայում է այն իրողությունը, որ 1920-1930-ական թվականներից հետո էլ՝ մինչև Խորհրդային Միության փլուզումը, ՀԿԿ բոլոր փաստաթղթերում պարտադիր կարգով շեշտվում էր պայքարի շարունակելիության ու ակտիվացման հրամայական անհրաժեշտությունը:

Հետագա տարիներին հակախորհրդային դիրքորոշում ունեցողներին, որպես կանոն, ներկայացվում էր «դաշնակցական» լինելու մեղադրանք: Չնայած արտասահմանում ևս պայքարի փորձերին, այդուհանդերձ, Սփյուռքում ՀՅԴ կազմակերպչական կառույցները պահպանվեցին: Իսկ Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, երբ կոմկուսն արդեն անգործունակ կարգավիճակում էր հայտնվել, ՀՅԴ կուսակցությունը կրկին իր որոշակի դերակատարումն ունեցավ արդեն հասարակական-քաղաքական նոր համակարգում:

Փաստորեն, մենատիրական կուսակցական համակարգի հաստատման ու վերջնական ամրապնդման ճանապարհին նոր խորհրդային իշխանությունների քաղաքական ուժ կոմկուսը չհանդուրժեց գաղափարապես թշնամի ՀՅԴ-ի գոյությունը:

**Ավագ Ա. Հարությունյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայկական հարցի և հայ ազգային-ազատագրական շարժման պատմության հիմնահարցերը:

Էլ. հասցե՝ [avag.harutyunyan@yandex.com](mailto:avag.harutyunyan@yandex.com)

Summary

## **THE POLITICS OF THE SOVIET GOVERNMENT TOWARDS THE ARF DASHNAKTSUTYUN IN THE 1920S**

A view after a century

Avag A. Harutyunyan

*Candidate of Sciences in History*

**Key words** – Soviet power, ARF Dashnaktsutyun, Communist Party, Riga negotiations, Dro, liquidation, Cheka.

There was an ideological-political conflict between the Armenian Revolutionary Federation-Dashnaktsutyun and the Communist Party of Armenia before the Sovietization of Armenia, after which it grew into a large-scale struggle. This time, the active, offensive side, of course, was the new authorities, who set themselves the goal of “eradicating” from the Soviet-Armenian reality everything that was connected with the name of the ARF by all possible and impossible means.

Thanks to the heroic struggle of Zangezur, in 1921 in Riga, the Communist Party of Russia had to negotiate with the ARF, with which the Communist Party of Armenia was against. Negotiations ended in failure after the Zangezur uprising ended.

In 1921 a public trial against the ARF was organized. The Communist Party of Armenia started the “liquidation” of the ARF. The Armenian Cheka was on the front line of the struggle. In 1923 the congress of the “former ARF members” took place in Yerevan’s theater which decided to “liquidate” all structures of the ARF in Armenia. The 1928 November plenum of the Communist Party of Armenia was a turning point, which reassessed the ARF, previously considered petty-bourgeois, already as big-bourgeois and fascist. The ARF was criticized by all the leaders of Soviet Armenia.

As a result of the Communist Party’s policy, ARF Dashnaktsutyun was liquidated as party in Soviet Armenia. However, that did not mean that the struggle against the ARF ceased. This is evidenced by the fact that before the collapse of the Soviet Union, all documents of the Communist Party of Armenia stressed the need to continue and intensify the struggle against the ARF. In the following years, those who had an anti-Soviet position were usually accused of being “Dashnak”. Notwithstanding the attempts of struggle abroad, the organizational structures of ARF Dashnaktsutyun in the Diaspora were preserved. And already after the collapse of the Soviet Union, after the proclamation of the Republic of Armenia, when the same Communist Party was already in an inoperable state, the ARF Dashnaktsutyun party again occupied a certain role in the new social-political system.

## ПОЛИТИКА СОВЕТСКОЙ ВЛАСТИ В ОТНОШЕНИИ АРФ ДАШНАКЦУТЮН В 1920-Е ГГ.

Взгляд спустя столетие

Аваг А. Арутюнян

*Канд. ист. Наук*

**Ключевые слова**-Советская власть, АРФ Дашнакцутюн, Коммунистическая партия, Рижские переговоры, Дро, ликвидация, Чека.

Между Армянской Революционной Федерацией Дашнакцутюн и Коммунистической партией Армении существовал идейно-политический конфликт еще до советизации Армении, который после перерос в широкомасштабную борьбу. Активной, наступательной стороной, безусловно, были новые власти, поставившие перед собой цель «искоренить» из советско-армянской действительности все, что было связано с АРФД, всеми возможными и невозможными способами.

В результате героической борьбы в Зангезуре в 1921 г. Коммунистической партии России пришлось вести переговоры с АРФД, которые проходили в Риге. Против них была Коммунистическая партия Армении. Переговоры закончились неудачей после окончания Зангезурского восстания.

В 1921 г. в Ереване был организован публичный суд над АРФД. Коммунистическая партия Армении начала «ликвидацию» АРФД. Армянская ЧК находилась на переднем крае этой борьбы. В 1923 г. в Ереванском театре прошел съезд «бывшей АРФД», который решил ликвидировать все структуры своей партии. Переломным был ноябрьский пленум Компартии Армении 1928 г., который переквалифицировал считавшуюся до этого мелкобуржуазной АРФД уже в крупнобуржуазную и фашистскую партию. АРФД критиковали все лидеры Советской Армении.

В результате политики Компартии в Советской Армении АРФ Дашнакцутюн как организация была ликвидирована. Однако это не означало, что борьба против АРФД прекратилась. Об этом свидетельствует тот факт, что до распада СССР во всех документах Компартии Армении подчеркивалась необходимость продолжения и усиления борьбы против АРФД. В последующие годы тех, кто занимал антисоветскую позицию, обычно с порицанием называли «дашнаками». Хотя за границей, в Диаспоре организационные струк-

туры АРФД были сохранены. И уже после развала СССР, после провозглашения независимой Республики Армения, когда компартия уже не занимала лидирующей позиции, Партии АРФ Дашнакцутюн вновь стала отводиться определенная роль в новой общественно-политической системе.

## REFERENCES

1. “Banvor”, Leninakan, 1923, t‘t‘. 53, 70-74 (**In Armenian**).
2. “Izvestija CK KP(b)A”, Jer., 1922, N 1 (**In Russian**).
3. “Karmir Astgh”, T‘iflis, 1921, aprili 9 (**In Armenian**).
4. “Khorhrdayin Hayastan”, Yer., 1923, hulisi 31, õgostosi 1, hoktemberi 4 (**In Armenian**).
5. “Khorhrdayin Hayastan”, Yer., 1923, t‘t‘. 167, 174, 183-190, 194, 197-200, 210-215, 218, 220-231, 234, 238, 240-245, 248 (**In Armenian**).
6. “Khorhrdayin Hayastan”, Yer., 1929, aprili 11 (**In Armenian**).
7. “Martakoch’”, T‘iflis, 1923, õgostosi 3 (**In Armenian**).
8. **Agabekov G.**, GPU. Zapiski chekista, Parizh, 1930 (**In Russian**).
9. Dashnaks‘ut‘yun kusaks‘ut‘yan datë, “Khorhrdayin Hayastan”, Yer., 1921, noyemberi 27, dektemberi 1, 3, 4, 9, 13 (**In Armenian**).
10. **Ghazarean A.**, Azatut‘ean ughin yew hayi k‘aghak‘akan vark‘agitsë, T‘ehran, 1924 (**In Armenian**).
11. **Ghazarean A.**, H. Y. Dashnaks‘ut‘ean ardi k‘aghak‘akanut‘iwnë, T‘ehran, 1928 (**In Armenian**).
12. **Ghazarean A.**, Momentë pahanjum ë, T‘ehran, 1926 (**In Armenian**).
13. **Ghazarean A.**, S. Vrats‘eanë yew ants‘eali iroghut‘iwnnerë, T‘ehran, 1925 (**In Armenian**).
14. HAA, f. 1, ts‘. 1, g. 40, t‘t‘. 17, 51 (**In Armenian**).
15. HAA, f. 1, ts‘. 2, g. 1, t‘t‘. 2-3 (**In Armenian**).
16. HAA, f. 1021, ts‘. 2, g. 1187, t‘. 13 (**In Armenian**).
17. HAA, f. 1440, ts‘. 1, g. 30, t‘. 1 (**In Armenian**).
18. HAA, f. 1444, ts‘. 1, g. 6, t‘. 1 (**In Armenian**).
19. HAA, f. 1457, ts‘. 1, g. 190, t‘t‘. 1-8 (**In Armenian**).
20. HAA, f. 1457, ts‘. 1, g. 191, t‘t‘. 1-3, 5-10, 17-18, 28-36 (**In Armenian**).
21. HAA, f. 1457, ts‘. 1, g. 192, t‘t‘. 1-8, g. 193, t‘t‘. 1-2 (**In Armenian**).
22. **Harut‘yunyan A. A.**, Rigayi 1921 t‘. HYD-ՔԿ(b)K banaks‘ut‘yunnerë khorhrdayin gaghtni p‘astat‘ght‘erum, “Vëm”, Yer., 2012, N 1, ëj 205-240 (**In Armenian**).
23. **Kasyan S.**, Bats‘ namak gaghut‘ahay ashkhatavor zangvatsnerin, P‘ariz, 1930 (**In Armenian**).
24. **Kasyan S.**, Dashnakneri provokats‘iayi npatakë, “Karmir Astgh”, T‘iflis, 1921, noyemberi 22 (**In Armenian**).
25. **Kasyan S.**, Ėntir yerker, Yer., 1967 (**In Armenian**).
26. **Kasyan S.**, Nrank‘ yev menk‘, “Karmir Astgh”, T‘iflis, 1921, noyemberi 19 (**In Armenian**).
27. **K‘iwrk‘chean Y.**, Uruagits H. Y. D. patmut‘ean 1919-1924 hngameaki, At‘ënk‘, 1988 (**In Armenian**).
28. **Lukashin S.**, Hodvatsner, zekuts‘umner, chařer, Yer., 1986 (**In Armenian**).

29. **Mravyan A.**, Ants'yali stverner, "Khorhrdayin Hayastan", Yer., 1923, mayisi 26 (**In Armenian**).
30. **Mravyan A.**, Azgeri ink'noroshman iravunk'ë yev p-rn Khatisyanë, "Khorhrdayin Hayastan", Yer., 1928, hunisi 15 (**In Armenian**).
31. **Mravyan A.**, Dashnakts'akannern inch' en davum, "Khorhrdayin Hayastan", Yer., 1923, mayisi 20 (**In Armenian**).
32. **Mravyan A.**, Hodvatsner yev chařer, Yer., 1961 (**In Armenian**).
33. **Mravyan A.**, Mayisyan õrer, "Khorhrdayin Hayastan", Yer., 1922, mayisi 10 (**In Armenian**).
34. Nakhkin shark'ayin dashnakts'akanneri hamahayastanyan hamagumari ardzanagrut'yunnerë, Yer., 1923 (**In Armenian**).
35. **Nawasardean V.**, HYD likvidats'ian, Gahirë, 1924 (**In Armenian**).
36. Oktjabrskij plenum ZKK VKP(b), Tiflis, 1928 (**In Russian**).
37. **Ordzhonikidze G.**, Izbrannyje proizvedeniya, Jer., 1986 (**In Russian**).
38. **P'ap'azean V.**, Im yusherë, hat. 3, Gahirë, 1957 (**In Armenian**).
39. Pjatyj s'jezd kommunisticheskix organizacii Zakavkaz'ja, Tiflis, 1928 (**In Russian**).
40. RGASPI, f. 13, op. 1, ss. 1-8 (**In Russian**).
41. RGASPI, f. 85, op. 24, d. 250, l. 5, d. 281, l. 16, d. 283, ll. 26-28 (**In Russian**).
42. Rossijskij gosudarstvennyj arxiv social'no-politicheskoy istorii (RGASPI), f. 85, op. 18, d. 60, l. 29 (**In Russian**).
43. **Ter-Gabrielyan S.**, Hodvatsner, chařer, p'astat'ght'er, Yer., 1979 (**In Armenian**).
44. **Virabean A.**, Drõn yev khorhrdayin ishkanut'iwnë, "Drõshak", Yer., 1998, N 5 (**In Armenian**).